№ 103 Յունիսի 9 (21) 1881 Յունիսի 9 (21) № 103

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ.

Ծանրաբարոյագրից գիրքերի մէջ են ուղարկի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Բոլոր տարաբաշխութիւն ընդունվում է ամեն լեզուով;

Բոլոր տարաբաշխիչների համար գնվում են
Խրատանվեր բոնի 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրաւիրում ենք.— ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, նամակ Մոսկվայից։ Նամակ Խմբագրին, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Մանզումէի Էֆքեար» լրագրի յօդուածը.—ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ.—ԲԱՑԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կրիտիկային ուղղութիւն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խոնարհաբար խնդրում ենք մեր „Մշակի“ թէ անցեալ և թէ այս տարվայ բաժանորդներին շուտով հայտնել մեզ իրանց վրա մնացած ապառիկները։

ՀՐԱՒԻՐՈՒՄ ԵՆՔ

Մեր ստացած տեղեկութիւններին համեմատ վիհափառ կաթողիկոսը անյուսալի դրութեան մէջ է։ Նամակագիրներից ոմանք, որպէս հատատ աղբիւրից հաղորդում են որ վիհափառի հիւանդութիւնը հոգեկան հիւանդութիւն է։ Մանկունին փակված է պահում կաթողիկոսին, ոչ ոքին ներս չէ թողնում նրա սենեակը, որպէս զի ոչ ոք չիմանայ թէ նա հիւանդ է և ինքն, անսահման իշխանութեամբ իշխում է ամբողջ վանքի մէջ։

Այդ դրութիւնը, պէտք է խոստովանենք, բաւական վտանգաւոր դրութիւն է վանքի, ամբողջ հոգևոր վարչութեան և ազգային գանձի համար։ Այս դրութեան մէջ թողնել Էջմիածինը նշանակում է անհոգ հանդիսանալ ազգային սեփականութեան վերաբերութեամբ, նշանակում է պատասխանատու լինել ազգի թէ ներկայ սերունդի և թէ ապագայ սերունդների առաջ։

Երբ Մատթէոս կաթողիկոսը հիւանդացաւ, Թիֆլիսից անյապաղ պատգամաւորութիւն ուղարկեցաւ Էջմիածին, ազգային գանձը, ազգային սեփականութիւնը այլ և այլ պատահարներից ապահովելու համար։ Թիֆլիսը, որպէս Ամենայն Հայոց Աթոռի կենտրոն, մեր կարծիքով պարտաւոր է նոյնն անել և այժմեան հանգամանքներում եթէ Թիֆլիսի ինտելիգենցիան չը հաւաքվի, չը համոզի տեղիս հայ հասարակութեանը շուտով իրանից պատգամաւորներ ընտրել և ուղարկել Էջմիածին,—նա մեծ յանցանք գործած կը լինի։ Պէտք է պատգամաւորներ ուղարկել, որոնք մի կողմից համոզվելով բժշկների միջոցով թէ ինչ տեսակ հիւանդութիւն է վիհափառի հիւանդութիւնը, միւս կողմից հաշիւ պահանջելով Մանկունուց, պէտք է մեր կարծիքով մնան Էջմիածնում մինչև որ կաթողիկոսը առողջանայ։

Բայց եթէ, ինչպէս մեզ հաղորդում են, վիհափառի առողջանալու վրա յոյս չը կայ, պատգամաւորները պէտք է իրանց ձեռքը գցեն վանքի բոլոր գանձերն ու հաշիւները որպէս զի վանքի դրութեան մասին հաշիւ տան ազգին։

Հրաւիրում ենք, ուրեմն, Թիֆլիսի հայ հասարակութեանը անյապաղ պատգամաւորութիւն ընտրել և ուղարկել Էջմիածին, եթէ ոչ կարող է ուշ լինել և երբ որ ազգը կուզենայ տեսնել վանքի հաշիւները,—կարող է պատահել որ ազգի ամբողջ սեփականութիւնը արդէն վատնված կը լինի գանագան Մանկունիների ձեռքով։

Եթէ մի որ և է Ներսիսեան դպրոցի մէջ, որտեղ հոգաբարձուները բոլորն էլ բարձր ուսում ստացած մարդիկ են, առանց ժողովրդի վերահսկողութեան փողերը հոգաբարձներով կորչում են գանձարանից, կարող էք երևակայել թէ ինչ է կատարվում Էջմիածնում վիհափառի անյուսալի, օրհասական հիւանդութեան ժամանակ։

Ամեն բան կեղծաւորութիւն է մեզանում։ Երբ որ ամենաչնչին վերանորոգութիւն ես առաջարկում լուսաւորչական եկեղեցու մէջ,—ամենքը, նոյն իսկ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների պէս մարդիկ, ոչ ոք չի դիմանում։ Ամենքը գոչում են թանկ է, թանկ է։ Բայց երբ հարցնում ենք, որպէս Ազգերկրամասեան հայոց Թիֆլիսը